Կաղզուանի դաւառներով միայն, Օլթին եւ Արդահանը դուրս թողնելով հայկական տերրիտորիալ միաւորից։

Վրայ հասաւ Ռուսաստանի փետրուարեան յեղափոխութիւնը 1917ին։ Ռուսաստանի ժողովուրդները տակաւ սկսեցին ազգային-տերրիտորիալ ինքնավարութեան պահանջներ դնել Պետերբուրգի նոր, ժամանակաւոր կառավարութեան առջեւ։ Անդրկովկասի ազգերը սկզբում պատրաստ էին լիովին գոհանալու դաւառական լայն ինքնավարութեան (դեմոստվո) իրականացումով։ Հայերի պահանջն էր նախ քան այդ՝ վարչական նոր սահմանաբաժանումներ կատարել։ Պետերբուրգը համաձայնեց։

Վրաց ղեկավար կուսակցութիւններն էլ այդ ժամանակ, մանաւանդ դրանից առաջ, համաձայն էին՝ հայկական հողային միաւորների մէջ առնելու Թիֆլիսի ու Գանձակի նահանգների հայաբնակ դաւառները։ Այդ մասին նրանք յայտնել են քանիցս հրապարակով։ Գոնէ դէմ չեն արտայայտուել։

Հոկտեմբերեան յեղաշրջումը ամէն ինչ տակնուվրայ արաւ նաեւ այս մարզի մէջ։ Տեղի ունեցաւ Անդրկովկասի բաժանումը Խորհրդային Ռուսաստանից։ Աւելի շուտ՝ վերջինս լքեց եւ հեռացաւ այնտեղից։ Հետեւեցին Անդրկովկասի հանրապետութիւնները։ Արիւնոտ փոթորիկների միջից ծնեց Մանուկ Հայաստանը Մայիս 28-ին, մարմնով վտիտ ու նիհար։ «Դէպի տուն» փախած Ռուսաստանը 1920-21-ին նորէն Անդրկովկաս եւ Հայաստան եկաւ։ Այն ժամանակ, փախչելիս, զէնքերը եւ ամէն ինչ վար էր նետում նա, միայն թէ շուտո՛վ անցնի Կովկասեան լեռնաշղթայից հիւսիս։ Այս անգամ, վերադարձին, դինավառ էր մինչեւ առամները, սուին ու կացին սրած, հաղած կարմիր պատմուճան։

Պատմութիւնը յայտնի է։

Ի՞նչ համբաւ, ի՞նչ թուական կարողութիւն էր ամբարել հայութիւնը վերջին քսանամեակի ընթացքում՝ քանիցս փոփոխուած փր սահմաններից ներս, հայկական բնադաւառներում։ Այն երկրամասում, որի վերաբերմամբ Անդրկովկասի հայութիւնը ազգային-հողային իրաւունքներ առաջադրեց։

Տեսնենք։

ՀԱՅԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻՆ ՎՐԱՅ

(ՆԻՒԹԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ)

Գրեց՝ ՀՈՐ. Գ. ՂՈՐՂԱՆԵԱՆ

(ՆԱԽԿԻՆ ԵՆԹԱՊԵՏ ԿՈՎԿԱՍՈՒՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ԸՆԴՀ. ՍՊԱՏԱԿՈՊՏԻՆ)

Ռուսերէն ձեռագրէ թարգմ. Ռ. Լ.

ԳԼՈՒԽ ԺԷ

ԿԱՐԻՆԻ ՇՐՋԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

(Տեսնել քարտէս թիւ 11)

Երզնկայի ջոկատը միանալով Կարինի մէջ եղած ուժերուն, կազմուեցաւ Կարինի զօրախումբը հետեւեալ կերպով.

Առաջին հայկական առանձին կիսաբաժին, *որի կազմին մէջ կը մտնէին՝ Կարինի հետեւակ գունդը* (2 *վաշտ* — 600 *սուին*), *Երզնկայի հետեւակ գունդը* (3 *վաշտ* — 1,400 *սուին*) *եւ լեռնային հրետանիի բաժինը* (2 *մարտկոց* — 8 *թնդանօթ*)։

Առաջին հայկական զարկորդաց զօրաբաժնի հետեւեալ մասերը. *Ա. հայկական զարկորդաց գունդը* (2 *վաշտ* — 500 *սուին*), *մէկ վաշտ Դ. հայկական զարկորդաց գունդէն* (300 *սուին*), *Կարինի պահեստի վաշտը* (300 *սուին*) *եւ կամաւորական մասեր* (3 *հարիւրեակ* — 400 *հեծեալ*)։

Թուով թոյլ այս զօրախումբը պէտք է իր